ԹՈՐՈՍԳՅՈՒՂ

Վարչական ղեկավար՝ Արմենակ Սարգսյան

Հեռ: 093 42 23 49

Մակերես՝ 12.3 կմ^2

Բնակչություն՝ 365

Ինդեքս՝ 2804

melsida.gagikovna@mail.ru

Թորոսգյուղը գտնվում է ՀՀ հյուսիս-արևմուտքում Շիրակի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, ծովի մակարդակից 1960 մ բարձրության վրա: Թորոսգյուղը հիմնադրվել է 1828-30 թթ., Արևմտյան Հայաստանի Մեծ Հայքի Բասեն գավառի Վերին Բասենի Հարսենքար գյուղից տեղահանված գաղթականների կողմից: Գյուղի ազգաբնակչությունը բացառապես հայեր են:Գյուղից արևելք գտնվում է հին գյուղատեղի Գյուրչշջիյոլ անվամբ,որը թարգմանվում է «վրացու ճանապարհ»: Գյուղի 127 հայորդիներ մասնակցել են Հայրենական Մեծ պատերազմին,որոնցից 56-ը իրենց կյանքի գնով են կերտել հաղթանակը: Մինչև 1972թ. Գյուղում տնտեսավարման ձևը եղել է կոլեկտիվ-

կոլխոզային:1972թ. Կոլեկտիվ տնտեսությունը վերափոխվել է խորհրդային տնտեսության «սովխոզ»:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:Ձմռան տևողությունը մոտ 6 ամիս է,խստաշունչ,տեղացող ձյան շերտի հաստությունը մինչև 1մ:Ձմռանը միջին ջերմաստիճանը -25ց է:Տարեկան տեղումների միջին քանակությունը մոտ 700մմ է:Գյուղը գտնվում է հյուսիս-արևելյան քամիների ազդեցության գոտում:

1990-94 թթ.-ին գյուղում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթաց:

Այժմյան գյուղի ընդհանուր մակերեսը կազմում է 1226 հա, իսկ բնակչությունը կազմում է՝ 355 մարդ: Թորոսգյուղն ունի միջնակարգ դպրոց,բուժկետ, կապի հանգույց: